


ՏԵՐԵՆ ԵՆՈՒՆ

Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Կամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի  
ՔԱՅԻՐԷ (Եգիպտոս)



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկու ժամ	60
Վեց ժամ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԻ	
Տարեկան	Տրակ 20
Վեցամսեայ	« 12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՆԻԿ  
ՆԵ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔԸ  
ԽՆՔԱԳՐՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ Է :

ԽՆՔԱԳՐՈՒՅԵԱՆ ՈՂՂՈՒՄ  
ԳՐՈՒՅԻՆԷՍ ԿՆ ԵՆ ՏՐԱԽԻՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ  
ԿԱՆԻՒԿԻ ՎՃԱՐԵԼԻ ԷՆ

E. TOROSSIAN  
Direct.- propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

ԽՐԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ ԴԱՏ . քաժա-  
նորդներէն ջեղեկացի կը խնդրուի որ քա-  
ւեհաձեփն նախորդ տարիէն մնացեալ պար-  
տոց կցեղով որիկը նստել իրենց ԵՐԿՐՈՐԻ  
Տարեկանի քաժանորդացիներ , եւ նախ  
որ քողով մասնաւոր դիմումներու , որոնք  
նոր դիմարտութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-  
ԼՈՅՍԻ արդէն քաղաքացայ Տեղիւնութեան :

ՀԱԿԱՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Մեր Առաջնորդարանին մէջէն պակ-  
պած չէ՛ երբէք հակասական որոշումներու  
չարք :

Եթէ կարելի ըլլայ մեր ժողովականաց  
արձանագրութեան տուժարներն մէկ երկու  
հոգիի առջև ձգել , թեթեւ քննութենէ մը  
անցնելու համար , այն ատեն զարմանքով  
պիտի տեսնուի որ՝ անոնց մէջ կը վխտան  
իրարու դէմ թնդանօթ արձակող որոշում-  
ներու լեզբներն :

Թողունք անցեալը , որը առ այժմ  
խնամով վարագործուած է մինչև ց'որ  
տնօրինութիւն , դեռ այժմեութեան պատ-  
կանող քանի՛ քանի օրինակներ կան մեր  
աչքին առջև , որոնց մանրամասնութեանը  
տեղեկանալու համար , ո՛չ մեր գծուարա-  
հաճ առաջնորդարանին դիմում ընելու պէտ-  
քը կայ , ուղղակի արձանագրութեան աչ-  
բերէն քաղելու համար տրուած հակասա-  
կան որոշումներն , և ոչ ալ՝ մեր փափա-  
քին հասնելու համար , խնդրագիր մը գրե-  
լու գծուարութիւնը յանձն պիտի առնենք :  
Հազիւ երկու ամիս կայ . Ապտինի  
թերթը իր բոլոր ուժը թափեց , իր բոլոր  
ճարտասանութիւնը գործածեց՝ Հայ ժողո-  
վրդին ներկայացնելու համար քահանայ մը ,  
որ Հայ ազգին՝ կամ մասնաւորապէս Եգիպ-  
տոսի Հայ գաղութին բարեբաստութենէն ,  
համալսարանէ մը ելած է եղեր :

Այդ թերթին խժտուածները երբ որ  
լսեցինք , ըսինք ինքնիրեննիս . « Այս քա-  
հանան որչափ ալ ուխտագնացութեան պա-  
տրուակաւ մեկնած ըլլայ իւր հայրենի-  
քէն՝ դարձեալ աչքը չորս կողմը յառած ,  
պաշտօն մը մուրալու ետեւէ է . » ու ինչ-  
պէս որ գուշակած էինք , քանի մը օր վերջ  
վերահաս իրականութիւնը մեր գուշակու-  
թիւնը հաստատեց :

Քահանան Տեսուչ եղած էր , ի շնորհս  
մէկ քանի պղտոր շուրի մէջ ձուկ որսա-  
ցողներու շանքերուն . . . :

Հոս չէր վերջանար քահանային հար-  
ցը . անոր պաշտպանները մտածած էին  
քահանային ձեռքը տալ միամեայ պայմա-  
նագիր , առանց սպանելու որ Առաջնորդը  
հասնի և՛ նա առ այդ պէտք եղածը տնօ-  
րինէ :

Ու այսօր , ինչպէս կը լսենք , քահա-  
նան իր պայմանագրին ուժով պէտք չ'զգար  
ո՛ւրէ կապ ունենալ Առաջնորդին հետ . ի  
հարկին խորհրդակցել անոր հետ , և անոր  
ալակցութեան դիմել . այլ պիտի ընէ ինչ  
որ ուզէ . ոչ ոք կրնայ խառնուիլ անոր .  
որովհետև անոր գործոց խառնուիլ ուզողը  
պիտի տուժէ նախ միամեայ պայմանագրի  
պարունակած ամբողջ գումարը :

Նորընտիր Տեսուչ-Քահանան իր նոր  
ստանձնած պաշտօնին մէջ պատ ի պատ կը  
քալէր . Օր մը կը լսէինք թէ՛ կ'ըսէ եղբր  
տղայոց որ , նախ՝ Ձեր հայրերը պէտք է  
քերպիյի ընեմ , ու մէկ երկու կիրակի  
անոնցմէ ոմանք տեղ մը կը հաւաքէ , քա-  
նի մը բան կը լսուի ու շատ բաներ կը լսէ  
. . . թերևս համալսարանի մէջ լսածներէն  
ա՛լ աւելի :

Ուրիշ օր մը կը լսէինք որ բարձրագոյն  
կարգի տղաները բաւական ատեն է դաս  
չեն առներ , առ ի չգոյն անոնց դաս սա-  
լու կարող դասատուաց : Ա՛յսպէս յայտա-  
բարած է եղեր Տեսուչ-Քահանան :

Ուրիշ օր մ'ալ կը լսէինք թէ՛ դասե-  
րու դադարելուն պատճառն է եղեր , նա-  
րընտիր տեսչին առաջնորդութեան դասը  
վարժարանի ծրագրին վրայ աւելցնելու հա-  
մար , նոր ծրագիր մը պատրաստելով ըզ-  
բաղած ըլլալը :

Եւ ուրիշ աւելի երջանիկ առաւօտ մ'ալ  
կը լսէինք թէ՛ Եգիպտոսի Առաջնորդը հա-  
սած է , մէկ երկու օրէն վարժարան այցե-  
լած և վարժարանին վիճակը շատ տխուր  
կացութեան մը մէջ գտնած է :

Տեսուչ-Քահանային երկու ամսուան մէջ  
կրած տքնութիւններն , պատրաստած ծրա-  
գիրներն — եթէ երբէք այն ալ ստուգիւ  
պատրաստած էր — մտադրած յառաջդի-  
մութիւններն , օգին մէջ կառուցած Սպա-  
նիական պալատներն , մոզական գաւազա-  
նի ուժով , կը չբանան , կ'ոչնչանան ու  
խեղճ համալսարանականը կ'ստիպուի իր  
առևտական կծովին գլուխը անցնել , և քա-  
նի մը գաւաթը մէկ մէկու ետեւ պարպել ,

մինչև որ հեշտաւոր (սամալար) իր գա-  
տարկութիւնը ծանուցած է . . . :

Երեսփոխան ժողով կը գումարուի .  
վարժարանի տխուր կացութիւնը կանաչ  
սեղանին վրայ կը գլուխ , կը ծեծուի ու  
կը ծեծուի . վերջապէս կ'որոշուի վարժա-  
րանին վիճակը իրապէս բարւոքել , և ինչ-  
պէս ծանուցինք , Տիրա Նշան Մալուժեանի  
նման իսկապէս ձեռնհաս և ուղղամիտ մէկը  
կը նշանակուի վարժարանի մասին պէտք  
եղածներն ընել և ծրագրել :

Հիմակ , ըսէ՛ք կ'ըսողքմ . Պատ . ըն-  
թերցողներ . Երեսփ . Ժողովոյն այս որոշ-  
ումը չի՛ հակասեր ու ջնջեր Քաղաքական  
Ժողովին տուած որոշումն ու միամեայ պայ-  
մանագիրը : Տեղը չէ՛ հարցնել Տեսուչ-  
Քահանան պաշտօնի գլուխ հրամայողներուն  
թէ՛ ո՞վ կը տուժէ այս հակասական որո-  
շումներէն . . . :

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ ՍԸ

« Յամաներու հետ , աստուածները իսկ  
գլուխ չեն կրնար ելլել » ըսուած է :

Այստարի վրայ կարգ մը խնդիրներ կան ,  
որոնք նախկին դարերու մէջ , երկար ժամա-  
նակ գիտութիւնը զբաղեցուցած են : Սակայն  
վերջապէս , գիտունք , շատ մը զորանոր փաս-  
տերով , նոյն իսկ իրենց անձը վրայ առնով ,  
հաստատած են իրականութիւնը և վճեցած ամեն  
ինչ : Մարդկութիւնը առանց ամենալայն կրթու-  
կանի մը , այդ արուած վճողն ճշմարտութիւնը  
ընդունած է :

Նորօրինակ գիտութիւնը , անհերքելի  
փաստերով , հաստատած է թէ , երկիրն է որ ա-  
րեւին շուրջը կը դառնայ , ո՛չ թէ արեւն է որ  
առաւօտուն երկրին մէկ կողմէն կ'ելլէ , ու իր-  
կունը միւս կողմէն կ'իջնէ — ինչպէս կը կարծե-  
ուէր դարեր առաջ :

Կամ ուրիշ կերպով , ոսկին կամ աղաման-  
գը ո՛չ թէ ծանրու վրայէն կը քաղուին պտուղ-  
ներու պէս , այլ երկրի խորը հողերու , քարե-  
րու հետ խառնուած են և իրենց չափաւել փա-  
ւերէն կամ հանքերէն է որ մարդիկ կը հանին  
ու զանազան արուհատական միջոցներով կը  
զանն ու իր իսկութեամբ զուրս կը բերեն ,  
փայլուն և շողողուն : Այս հասարակ և ամե-  
նապարզ իրողութիւնները չգիտնալու համար ,  
մարդու մը միտքը անթափանցելի խաւարով մը  
պատած ըլլալ պէտք է :

Եւ կամ ցերեկուան պայծառ արեւի լոյսին  
խաւար է ըսելու համար , մարդ երկու աչքերն  
ի ծնէ զրկուած կամ բառին բուն նշանակու-  
թեամբ , կոյր ըլլալու է :

Բնական այս շատ պարզ իրողութիւններու  
կարգէն է նաեւ , թուրք կառավարութեան — այս  
բառը գործածել եթէ մեղք չէ , որովհետև գա-  
զաններու վտանակի այդ կատարած խուժանը ,

իր մեծէն մինչեւ փոքրը կառավարուելու, ոչ թէ կառավարելու արժանի են— կարգ մը արարքները :

Երբեմնի օսմանեան խուժանի հրամանատար, այժմ փախստական՝ Օսման փաշան, Փարիզի մէջ Գերման թերթի մը թղթակցին հետ տեսնուած ժամանակ, այս վերջինը Երևտրդի մարդակերպ կարմիր գագանի մասին տեղեկութիւններ է ուղեր. փաշան սա պէս պատասխաններ է :

« Արեան յիմարութենէ աւելի, ըսեր է Օսման փաշան, ծայրայեղ վախկոտութեան յիմարութիւն մ'է Սուլթանի յիմարութիւնը, խենդի մը, անմիտի մը պէս կ'սպաննէ նա, որպէսզի զինքը չ'սպաննեն. ուրիշ մը արհաւիրք ազդող տեսարաններ ընդհակառակը Սուլթանին հաճոյք կը պատճառեն... (\*) Եւ այլն : Այսինքն Սուլթանը ինչ որ կ'ընէ, իր ըրածին գիտակցութիւնը չունի. ուրիշներ — զինք շըրջապատողները անշուշտ — զանազան երեւակայական եւ յերիւրուած սուտերով զինքը վախով նախապաշարեր են, ու ինք՝ անձնապաշտպանութեան համար է որ ամեն չարիք կ'ընէ : »

Թուրք կառավարութիւնը, այսինքն Երևտրդի ճիւղը, քաջ համոզուելով թէ՛ այլ եւս անկարելի եղած է, սկիզբի ու վերջին ոճիւրներու պատասխանատուութիւնը ուրիշներու վրէժ փաթթել, սկսած է մեղմացուցիչ պարագաներ ստեղծել պատմութեան առաջ ու տիեզերքի նախատինքին դէմ :

Անուղղակի կը խոստովանի թէ արդարեւ այդ ոճիւրները գործեր է. սակայն ուրիշները մղեր են զինք այդ ոճիւրները գործելու. առանց մտածելու թէ՛ անողոք ճշմարտութիւնը արդէն տուեր է իր վերջին վճիռը, ու մեղմացուցիչ պարագաներ ստեղծելով՝ ոճիւրը ոճիւր ըլլալէ չի դադարիր, եւ ո՛չ ալ ինք մեծ մարգասպան կամ փախուստի ճամբաներ որոնելը, այնչափ ցնորք մ'է, որչափ մահուան դատապարտուած ոճրագործի մը շղթայուած դէպի կախաղան առաջնորդուած պահուէն փախուստի մտածում մը : Եւ այդ մեղմացուցիչ պարագաները ստեղծելու համար որոշ գոյնով չէ որ հրապարակ կ'ելլեն սա ու ան : Այսօր Թուրքիոյ կեանքը ուսումնասիրող տեսրակ մը հրապարակ կը նետեն, վաղը՝ թերթի մը կաշակարար, ուրիշ որ մը թղթակցի մը միջոցաւ, ու վերջապէս հազար ու մէկ միջոցներով կը ճգնին, կարմիր գագանը պատասխանատուութենէ ազատել, կամ զէթ մէկ բաժինը նետել ուրիշ անձանութներու ուսին :

(Մեղմացուցիչ յարցոյցով) Թ. ՀԱՆՆՍ

(\*) Տե՛ս Ապտին փողոցի թերթին, 59 թիւ «Վախկոտ Սուլթանը» վերնագրով յօդուածը : Ծ. Թ.

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### Մ Ի Բ Ի Ա Մ Հ Ա Ր Ի Ի

#### Ե Կ Մ Ե Ն Ի Վ Ա Ր Դ Ը

Ցեղերը հաւաքուած էին ուղտարչաւին : Խորտուրորտ հողին վրայ վրաններ կանգնած էին, բոլոր դաշար մրցողներուն տրամադրելու համար :

Ասոնք հարուստ վրաններէ պատանիներ էին, որոնց հայրը հօտերու տէր էին. եւ ասոնցմէ իւրաքանչիւրը պէտք էր որ առ նուազն երկու աղինու ուղտ ունենար :

Եւ այն, Թոռի սրդին, նոյն իսկ սեւ ուղտ մը չունէր. իւր հայրը տիկեր կը շինէր, ու նէտեր կը սրէր :

Բայց Եւայի, թէպէտեւ աղքատ, կարող էր ցեղապետի մը որդիէն աւելի լաւ երիվարներ զսպել : Նա ճարտար էր յանպատրաստից ոտանաւորներ հիւսելու մէջ. եւ երբ իր ծակ վերարկուէին մէջ փաթթուած աղբիւրին քովէն կ'անցնէր, կիները զայն տեսնելով կ'զմայլէին :

Սակայն քանի մը օրերէ ի վեր, իր ներշնչումը ցամբած էր եւ այլ եւս աղբիւրին քով չէր երևնար :

### Ք Ի Ր Ի Ս Տ Ո Ս Ե Ր Բ Ծ Ն Ա Ի

Խոնդիր եղած է դիտնալ թէ՛ սոյն տիեզերահուշակ դէպքը քսան դար առաջ ո՞ր ամսոյն և քանի՞ն տեղի ունեցած է :

Այս մասին անհամաձայնութիւն կը տիրէ մեր՝ Հայոցս, և միւս քրիստոնեայ ազգաց միջև : Այս խոնդիրը միշտ կը յուշուի, մանաւանդ Մենդեան տօնի օրերը :

Մենք՝ Հայերս, յաճախ կը շուարինք կը մնանք և անկարող կ'ըլլանք մեր ընդդիմախօսներուն դէմ համոզիչ փաստ մը մէջ բերելու թէ՛ մեր ընդունած թուականն է ճիշդը :

Արդ 1901 ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՑԻՆ մէջ, ազգային և օտար պատմիչներու, մեկնիչներու վկայութեամբ ապացուցուած է անհերքելի փաստերով թէ՛ Քրիստոս Յունուար 6 ին ծնաւ և թէ՛ Առաքեալք և նախնի քրիստոնեայք առաջին դարերուն մէջ Քրիստոսի Մնունդը և Մկրտութիւնը մէկ օրուան մէջ, այն է Յունուար 6 ին կը տօնէին :

Ուստի սոյն օգտաշատ գիրքը, ինչպէս նաև պարզ օրացոյց գնել փափաքողք պէտք է դիմեն անձամբ կամ գրով յ'Ազգ. Վարժարան. առ՝

Օ Հ Ա Ն Ի Ն Տ Ա Մ Ե Ա Ն

### Ն Ս Ը

Երբ ուշի ուշով քննենք այն ամեն պատճառները, որոնք արգելք կը հանդիսանան միշտ մեր անհատական եւ կամ հաւաքական գործերու յաջողութեան պիտի գտնենք հոն վերադարձուած անձնատիրութիւն մը, խեղդուած ատելութիւն մը, հանդէպ սոյն ձեռնարկին, որ անհրաժեշտ կ'ըլլայ որ գործէ միշտ առանց զուլ ու դադար աւելու. ստապելու համար գործունէութիւն մը որ թերեւս կրնայ առաջին քայլը նկատուիլ յառաջդիմութեան :

Ամեն գործ ըլլայ անձնական, ըլլայ ընկերական, գերծ չէ՛ մնացած երբէք նմանօրինակ յարձակումներէ. փորձէ՛, աշխատէ՛ դիմապահեր ընել անազնիւ ձեռնարկ մը, շօշալի՛ « ես » ի մը թելերը ու ահա պիտի գտնես քու

Աւագին մէջ պտուկած, իր լայն բերբրը անշարժ կը խորհէր այն նուաստութեան վրայ թէ՛ իրեն համար մեծ նախատինք պիտի ըլլար ուղտարչաւին չկարենալ մասնակցիլը :

Նաեւ ուշադրութեամբ կը դիտէր այն մեծ վրանը, ուր ըստ հնաւանդ սովորութեան մը, օրիորդներ պիտի երթային բազմիլ... :

Ուղտերուն անցած միջոցին անոնք իրենց քողերը պիտի խլէին, եւ ձիւտորները սրարչաւ պիտի տանէին քակուած մազերու, կ'ըր դէմքերու եւ մերկ բազուկներու շմորող ու վազանցուկ տեսիլքը :

Եւ Եւայի իր գլխուն վրայ աւագ կը ցանէր եւ իր խեղճ վիճակը կ'անիծէր... :

Այս տիրութեան մէջ գետնին վրայ, յանկարծ ստուեր մը երեւցաւ. երիտասարդը աչքերը վեր վերցուց եւ իր քովը կծկուած տեսաւ Աստամը : Սա՛ հարուստի մը զաւակն էր եւ Եւայի չէր սրբեր զայն :

Երկուքն ալ մունջ կեցան, իւրաքանչիւրը կ'զգուշանար խօսակցութիւնը սկսիլ, վերջապէս, Աստամ Եւայի ըսաւ.

— Ահաւասիկ պիտի մրցիմ, բայց կենդանիներու արագութիւնը զիս կը ցնորէ, այդ Հիւսէյնի աղջիկը, այն՝ զոր «Եկեմէնի վարդ» կը կոչեն, զիս իբր ամուսին կ'ընդունի միայն այն ատեն, երբ սրարչաւին մէջ յաղթող հանգիստանամ... :

դէմը զինուած անոյեան մը որ կ'սպաննայ միշտ. բարոյական բարձրութեան անկումը անմիջական կ'ըլլայ, ու ազնուութիւնը տեղի կուտայ « ես » ի առաջ, ալ անկարելի կը դառնայ քեզ առաջըն առնուլ մտաւուտ վտանգին :

Ա՛լ կ'իբրքն է որ կը գործէ. խուլ կ'ըլլա մ'է որ կը մղուի մութին մէջ հանդէպ բարւոյն՝ հանդէպ օգտակարին, անխելի կը մնայ իրեն արդարութեան ձայնը ու անտեսանելի կ'ըլլայ ճըշմարտութիւնը. անշուշտի զօրութեան մը ներքեւ կը յառաջանայ միշտ, կարծես երկաթէ ձեռք մ'է որ կը մղէ զինք դէպի յստաջ. ալ անգտանալի է. պէտք է հասնիլ հոն. հոն՝ իր թագուն ատելութեանց գաղաթնակէտը :

Երբէք չի պակսիր իրեն այն ամեն միջոցները, որով յագուրք մը տալ կը կարծէ իր կըրից. կ'որոնէ յառած աչօք պատճառ մը, փոքրը թերութիւն մը, ժամեր օրեր կը վատնէ իւր նպատակին հասնելու համար. օրեր՝ որոնք շատ աւելի օգտակար կրնային ըլլալ իրեն, ու ահա կը գտնէ, կը ծանրանայ անոր վրայ, կ'աշխատի, կը ճգնի, ու վերջապէս կը յաջողի այդ փոքր թերութիւնը անազնի պակասութեան մը վերածել, աւերելու, քանդելու համար գործ մը՝ որ անհուն զոհողութիւններով ու անկողծ սըրտերու անձնուրութեամբ յառաջ բերուած է :

Վերջապէս կը հասնի իւր նպատակին, իւր ատելութեան առարկան կը գահավիժէ անխելանի կացութեան մը մէջ. ու ահա դժոխային ճիծաղով մը վերջին դամբանականը կը կարգայ սոյն քայքայուլ հաստատութեան վրայ :

Ինչո՞ւ այս ամենը. ինչո՞ւ, միթէ ատելութիւնը, քէնը, ռիսակութիւնը մեր ցեղական ժառանգութիւնն են, արգարութիւնը ի գործ պէտք է դրուի կը պօսանք, առանց զգալու՝ հասկնալ ուզելու թէ՛ արդէն մենք բոլորովին շեղած ենք արդարութենէ, իրաւունքը մերը է՝ ա՛յս է ճշմարտութիւնը կը գոչենք. մեր սիրած գոյներով տոնելով ու նկարագրելով ամեն քան ու մեկնելով այնին պատճառներ մեզի օգտակար ձեւերու տակ, սրտանց ճանչնալով իրաւունքը չենք ուզեր անոր անսալ. կը խաբենք ինքզինքնիս շատ անգամ. խաբելով միանգամայն մեզ հետ միասին շատեր. ինչո՞ւ չի փնտռենք միշտ ճշմարտութիւնը. ինչո՞ւ չեղինք արդարութիւնէն, ինչո՞ւ չ'աշխատինք օգտակար ըլլալ մեր կողմնակիցներուն, մեր նմաններուն, մէկ խօսքով մեր ազգին. ինչո՞ւ վատնենք մեր թանկագին ժամերը անոտի պատճառաբանութիւններով, եւ ինչո՞ւ անտարբեր մնանք հանդէպ մեր բարենպաստիկ հաստատութեանց. արդեօք կ'ամբողջ կը պակսի մեզ. թողունք անձնասիրութիւնը մէկ կողմ, վանենք մեր մէջէն եսամոլները, թող ազնուութիւնը փայլի միշտ մեր

Նա նորէն լոնց, Եւայի իր ձեռքերուն դողգողալը յայտնի չ'ընելու համար, զանոնք աւագին մէջ միեց :

Միւսը յարցն. — Եթէ կուզես արշաւել իմ տեղս եւ եթէ առաջին հանդիսանաս, քեզի պիտի տամ թէ՛ սուր, թէ՛ վերարկու եւ թէ՛ սպիտակ ուղտու : — Հապա չի՞մ ուզեր, պատասխանեց Եւայի : Բայց նա տխուր էր, վասնզի Հիւսէյնի աղջկանը վրայ կը խորհէր... :

Պատրուգաւոր հրացաններու որոտներէն ուղտերը կը մեկնէին : Անոնք կը ցատկէին կ'ստատոսէին իրենց նուրբ սրունքներուն բացուածքով, եւ դեղնօրակ գետնին աւագներուն հետ իրենց խաբտեալ գոյնն ալ կը խառնուէր :

Եւայի, Աստամի զգեստներուն մէջ փաթթուած, դէպի բաց վրանը կ'ընթանար սրարչաւ :

Օրիորդները իրենց քողերը ձգեցին... :

Ուղտը փայլակի մը նման անցաւ, բայց Եւայի նշմարած էր զգլխի վրէժ մը մերկութիւնը : Նա արշաւին ատենը զանազանած էր երեք վարդագոյն կէտեր, մին բուստեայ քինթաթար մը՝ երկու կողմէ ապստամբ հատիկներու նման եւ... :

Աւագակոյտերը կը շարժէին իր աչքերուն առջեւ, կը հեռանային եւ փախստական մարմ-

ճակատներուն վրայ ու սիրոյ նշոյլը չի մարի երբէք մեր աչքերէն . մէկ խօսքով սիրենք զիրար , սորվինք յարգել մէկմէկ , ձեռք ձեռք տանք , միմեանք , ամեն գործերու մէջ յաջողելու անհետը ուսումնասիրենք . միշտ վառ պահենք մեր մէջ հայու արիւնը . ճանչցնենք օտարներու հայու կարողութիւնը , հայու կամքը . չ'սպասենք անոնցմէ այն ամեն առաւելութիւնները որ մենք մեր մէջ ունինք , թէև անմշակ մնացած է . թող ամեն անհատի պարտականութիւնը ըլլայ աշխատիլ՝ բարձրացնելու համար Հայ անունը . գիտնա՛նք յարգել տալ անոնց այդ անունը՝ որ մեր ճակատին վրայ կը կրենք եւ որ մեզի համար նուիրակն է :

ԱՐՏԱՇԷՍ ՄՍՐԼԵԱՆ

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 7 Յունուար . — Լորտ Գիշնէր կը ծանուցանէ թէ՛ 120 հոգինոց շոկատ մը , որ Նօքս զօրաբաժնին մասը կը կազմէր , Լինտլի մօտ իրմէ բազմաթիւ Պօէր գունդի մը հետ կուռած է : Գնդապետ Լէնկ , ուրիշ երկու սպաներ և 15 զօրք մեռած են , իսկ 2 սպայ և 20 զօրք վիրաւորուած են :

Ամսոյ 5 ին Պէպինկթըն գնդապետը Տըլլարէի բանակը ետ մղած է , Նաբորթի մօտ 20 հոգի կորսնցնելով : Տիւրքէ հրամանատարը գերի բռնուած է :

Քար 6 Յունուար . — Բազմաթիւ Հոլանտացիներ սուտ պատրուակներով դէպի հիւսիս կ'երթան , և արշաւողաց հետ կը միանան :

Ալիվալ Նորթհէյն ուրիշ Պօէր խոմը մ'ալ Քար մտաւ և Ռէնսօլթըրի երկաթուղին առջև երևան ելաւ , տարակուսելի է որ Տը Ռէթ անոնց հետ ըլլայ :

Լոնտոն 6 Յունուար . — Գերմանացիները Թիէն-Չինի հիւսիսային կողմը 45 հատ Գրուբի դաշտային թնդանօթներ գրաւեցին :

Լահէյ 6 Յունուար . — Քրիւկէր ապաքինած է :

Լոնտոն 6 Յունուար . — Քարի մէջ Պօէրներուն յարձակումները մեծ եռանդեամբ կը շարունակուին :

նոյ մը պէս կ'աներեւութանային . նորէն կը վերադառնային եւ սիրահարի ձեռքով կ'ուռէին :

Եւ բոլոր այս սպիտակութեանց պտոյտներուն մէջ , Եաչի , Կրեք ծիրանեղջյու կէտերու , երեք մարգարիտներու թրթռալը տեսաւ : Եւ ալ ուղտարշաւը մոռնալով թողուց իր կենդանին :

Երկար ատենէ ի վեր միւսները զինքը անցած էին : Տրբէք հողը չ'ըրաւ , և կը փոփոքէր ալ՝ յետախաղաց շարժումով մը երթալ բաց վրանին առջևը եղող աւազին մէջ նետուիլ . . . :

Վերջապէս նպատակին հասաւ , արշաւողներուն անամ կատակներուն ականջ չի կախեց եւ ոչ ալ Աստուծի անէծքներուն . այլ թոյլ տրուաւ որ քաջին հանն իրմէ վերարկուն , զէնքերը , գանձերը , որոնց համար իր աղքատութեանը մէջ այնչափ զիջերներ երազած էր :

Յանկարծ կայծակի արագութեամբ սրացաւ եւ աւազներու մէջ թաթխուած Հիւսէինի վրանին առջև կանկ առաւ հեւալով , ու ըստաւ .

—Քու « Ուարտա-էլ-Եամանա » անուն աղջիկդ ամուսնութեան կը խնդրեմ :

—« Ուարտա-էլ-Եամանա » , արդեօք քու հասակակից ընկերներուդ վաղելը տեսնելդ քեզի խենդեցող , միթէ Նէթուտի կրկներեւ ոյժը քեզի խելացնոր ըրաւ . թէ ոչ՝ մատղաջ սիրահար . աւազակոյտերու մէջ գտնուած անուշահոտ բոյսերու գիտնութիւնը ծծեցիր :

—Ինչ պէտք է անոր փոխարէն . . . . :

—Ինչ պէտք . քեզի խելք , ինձ ալ ուղտեր :

—Պիտի ունենամ . . . . . (Շարունակելի) Թարգ . ՕՆԵԿ

Անպաշտօն լուրերու նայելով , Պօէրները ուղղակի Քարի վրայ կը քալեն :

Կ . Պոլիս 5 Յունուար . — Բազմաթիւ թուրք շոկատներ յաղթուեցան Պուլկար աւազակախումբերէ , որք սահմանագլուխը անցած են :

Երկուստեք բազմաթիւ մեռեալներ և վիրաւորեալներ կան : Սահմանագլուխի բռնաբարման լուրք մեծ յուզում յառաջ բերած է Պոլսոյ մէջ :

Կ . Պոլիս 6 Յունուար . — Իսկիւպի մօտերը մեծ քանակութեամբ հրացան և ռազմանիւթ գտնուեցին , որոնք Պուլկարիոյ կը պատկանին :

Թուրք իշխանութիւնք բազմաթիւ ձերբակալութիւններ կատարած են :

Կ . Պոլիս 5 Յունուար . — Ժանտախտի վերեւումին համար , Թուրքիա 10 օրուան քարանձինա հաստատած է Զմիւռնիայէն և բոլոր Մոցերէն եկող նաւերուն :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն . Բ . ԽՏԻՎԸ՝ երեկ Ապտինի պալատին մէջ իր գահակալութեան Զրգ . տարեգարձին առթիւ ընդունելութիւններ կատարեց :

Ն . Բարձրութեան գահակալութեան առթիւ երեկ երեկոյ կատարուած հանդէսները և լուսավառութիւնները շատ չըքեղ էին և կը գերազանցէին ամեն տարուան հանդէսները :

Ն . Վ . ՊՕՂՈՍ փաշա Նուպար անցեալ օր Աղէքսանդրիա մեկնած է , իր հանգուցեալ հօր Բարձր . Նուպար փաշայի շիրմին աւարտմանը հակելու համար :

ՄԵՐ ԵՐԵՎԱՆԻՆԵՐՈՒՆ ԱՌԱՏԱԶԵՆՈՒԹԻՒՆԵՐԸ — Եթէ ստոյգ են մեզի հաղորդուած տեղեկութիւններն , Պատկ . Երեսփոխանական Ժողովը իւր անդամակի նստին մէջ — 30 ական ոսկիէն — վեցամսեայ մը՝ այսինքն 180 ոսկի , նուիրած է Գերապ . Առաջնորդին :

Բնական է թէ՛ Գեր . Առաջնորդը փոխանակ մխելու հարստութեան մը հիմնաքարը ըլլալու յարմար սոյն գումարը , ո՛ր և է դրամատան մը հետ իր գոնք-գոյրանք պիտի բանայ :

Այս առատածեռութենէն անմասն մընացած չէ՛ , կ'ըսեն , Տէր Մամբէն . և այս տարի երկրորդ անգամն է որ կը շորթէ . միայն թէ՛ այս անգամ քան ոսկեոյ բարձրացած է անոր նուէրին քանակը , և սա իբր վարձատրութիւն իր բարոյսի ( իմա՛ յարեօք ) պաշտօնավարութեանն համար . . . :

Եթէ նուէրներու հեղեղը այսպէս շարունակէ , կը կասկածինք թէ՛ ազգ . սրնտուկը քիչ ատենէն պիտի ստիպուի « գատարկութիւն » գուռացնող Գարբիէլեան փողը ձեռք առնել :

Կը ԼՍԵՆՔԻ թէ՛ Պազար Մուրուրի Լսարան-Ընթերցատան Վարչութիւնը ձեռնարկներ կ'ընէ Թատերական ներկայացում մը սարքել , և նպատակ ունի նաև ի մօտոյ Լսարան-Ընթերցատունը յարմար շէնքի մը մէջ փոխադրել , աւելի օգտակար ըլլալու փափաքով :

Մենք տարակոյս չունինք թէ՛ Պատ . Վարչութեան սոյն ձեռնարկներն յաջողութեամբ պիտի պսակուին :

ԻՏԱԼԱԿԱՆ Հիւպատոսարանի Առաջին

Թարգման Մօհամմէտ Ալի պէյ , ունկնդրութեան մը առթիւ , Խոփին նուիրած է Ռիչար Առիժատիրոս թապաւորին , առասպելական հակառակորդ Սալահէտտինի սուրը : Խոփը մեծ սիրով ընդունած է այս արքայական նուէրը :

ԳՈՂԱՔԻՍ Ահմադի վաճառատունը՝ այս տարի որոշած ըլլալով օրացոյց չ'բաժնել , ատոր յատկացեալ գումարը հեռեւեալ կերպով Աղքատախնամ ընկերութեանց տրուած է :

Մահմետական Բարեգործական ընկերութեան 35 եգ . ոսկի . — Յոյն Կաթոլիկ Բար . ընկ . 15 եգ . ոսկի . — Հրէից 11 Խալիսներու էլ-Թէվֆիզ ընկ . 10 — Իտալականին 8 . — Յոյն Օրթոտոքսներու 8 . — Մարօններու 7 . — Խալի Կաթոլիկներու 6 . — Սիւրիականին 5 . — Հայ Լուսաւորչականաց 5 . — Հայ Կաթոլիկներու 5 :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՊՕԷՐՆԵՐՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ . — Պօէրները Թրանսվալի արևմուտքէն անգղիական Պէշուանլանտ մտած են : Զօրեղ գօմմանտօ մը Քեմպըրլի և Մէքքիսի մէջտեղ վրայպուրկի բարձանց քով գտնուող գիծէն անցած է :

Ուրիշ 270 Պօէրներու վաշտ մը , թնդանօթներով քիչ մը աւելի Հիւսիսէն անցած է : Այս երկու գունդերը Տամարալանտի կողմը կ'ուղղուին :

Հիմակուհիմակ Պօէրներուն արշաւած կողմին տարածութիւնը Քարի հիւսիսէն Օրանսի կէսէն աւելի մեծ է :

Կը Ռէթ գեկտ . 28 ին Սենէկալ կը գտնուէր և հոն կը հաստատէր արշաւող բանակին ընդհանուր բանակատեղը :

ՆԱԹԱԼԻ ՄԷՋ . — Լոնտոնեան շատ մը թերթեր Սթանտէրթընէն 28 գեկտ . ին զրկուած հեռագիր մը կը հրատարակեն , որուն մէջ կ'ըսուի թէ՛ Նաթալի մէջ 800 Պօէր կը գտնուին :

Երկաթուղեաց դէմ եղած շատ մը յարձակումներ ետ մղուած են , գլխաւորաբար Ինկոօի և Ութրէիթի մօտ :

ԺՕՀԱՆԵՒՍՊԵՏԻՎ ՎՏԱՆԳԻ ՄԷՋ . — Ժօհաննէսպուրկէն 27 Գեկտ . թուով զըրկուած հեռագրէ մը կ'իմացուի թէ՛ Պօէրները Նիու-Քլալին Փօնթայնի հանքերու մարտկոցներուն վնաս հասցուցած են , ինչպէս նաև Նիու-Չայմըս հանքին :

Ասկից զատ Պօէրները կը շարունակեն գրեթէ ամեն օր Ժօհաննէսպուրկի Անգլիական յառաջնապահ գիրքերուն վրայ յարձակիլ :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

ԲԱԳՈՒԻ ՄԷՋ վերջերս վախճանած է Շամախեցի Մարգարեան անուն անձը և հետեւեալ կտակները ըրած է :

Հայոց Մարգարեանի Ընկ .	5000 ոսկի
Շամախի եկեղեցոյն	3000 »
Նոյն քաղաքի հիւանդանոցներուն	7000 »
Էջմիածնի վանքին	3000 »
Երուսաղէմի »	3000 »
Տոկոսովը չըքաւոր աղքատներ պահելու համար քաղաքային վարչութեան	4000 »
Ընդհանուր գումարն է	25000 »

ՊԱՐՄԻԿ մը 1000 բուրբի նուիրած է, կը գրէ Բագրևայեց, էջմիածնի ձեմարանին, և սակայն անտի 50 աշակերտք խնայողութեան համար արձակուած են...

ՄՇԱԿ լրագիրը, որ մինչև ցարդ շաբաթը հինգ անգամ կը հրատարակուէր, 1901 Յունուարէն սկսեալ, շաբաթական 6 անգամ պիտի հրատարակուի միևնոյն ուղղութեամբ:

Ա. ՄԱՆԹԱՇԻԱՆ Ռուսաց աշխարհագրական Ընկերութեան 1500 բուրբի նուիրած է:

ՄԱՍԻՍ, որուն հրատարակութիւնը անակնկալ պատճառներով ընդհատուած մը կրեց, վերստին հրատարակուիլ սկսած է, Տնօրէն-խմբագրութեամբ Տիար Տիգրան Արքիարեանի:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns and 4 rows of numbers representing Helvian statistics for 1901.

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns and 4 rows of numbers representing Baréghian statistics for 1901.

ՄԱՆԿԱԲԱՐՁ ՏՐԻԿԻՆ ՍՈՍԻԿ ԱՁԳԱՊԵՏԵԱՆ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսփիշէն փոխադրած է Եարա Ապարիւլ Ազիզ, Ալի փաշա Շէրֆի պարտիզին դիմաց, Անձէտ պէյ Ապարիւլ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ:

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՑԻ

Քանի որ Սէլվաձեան վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 'Ա' ի նիքէլ, կոթէն լարող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տրեալ է:

Տպագրութիւն ԺԱՂԱՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ 00088

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՅՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթոլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաթէ Տը Լա Պուրսի կեց:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վիսյակակներով և մեքայիներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ


Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է:

ՀԱՌԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յատկանշիւն:



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւնի մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ «ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԽԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՂԸ

Օտանայի ղեղարմին ղիւնացի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարսեր, Երջարտարաններ, Գիրքեր, Հրաշխագրեր, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերն:

1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ս. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ:

2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արդիւում է եղեր:

3. ՀԱՌԹԱՅԹԻՉ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրէնութեամբ Տ. Լեոն եղիազարեանցի:

4. ՉՈՒՍՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

Ա Ձ Դ

Եզրպտաբնակ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով այժմ Եզրպտոսի համար Արևելեան Մամուլի ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին:

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով:

Քաղաքէս հետու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հարցէին յ'Ազգ. վարժարանն ի Տարա-Էլ. Կիւնէնս:

Ա. ՊԱՆԵԱՆ

Մ Ա թ Ի Լ Տ

(Գալթականաց կեանքէն)

Գին 50 ՍԱՆԹԻՄ

ԳԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐԱՌՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳՐՈՒԻ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ո՞ր և է ընկերութեան մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող քաղաքներ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎՐՁՈՆ գլխաւոր գործակատար յ'Ազգ. քաղաքի: